

ԿԱՐՈՏԻ ԵՎ ՆԱՀԱՆՋԻ ԹԵՄԱՆ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ա. Ռ. ԴԵՄԻՐՃՅԱՆ

«...Նրբ անոնք, հայու այդ բեկորները եկան գիտակցության, արդեն իսկ ոտեղծվել էր ահավորագույն բառը մեր բառարաններում»¹։ Չափազանցություն չպիտի դիտել զրականագետ Լևոն Վարդանի այս բնորոշումը, քանի որ իր առանձնահատուկ կենսագրությունն ունեցող սփյուռք բառը հենց այդպիսի՝ «ահավորագույն» հնչողություն ունեւ դարասկզբին։ Նախապես վերացական մի հասկացություն, որ հենց այդ վերացականությամբ էլ ողբերգական էր։ Նկատելիք, որ արտասահմանը վաղուց արդեն անծանոթ չէր մեր պապերին։ Թիֆլիսն ու Պոլիսը, ուր իրենց ծաղկումն ապրեցին հայ նոր գրականությունը, նկարչությունը, թատրոնն ու երաժշտությունը, նույնիսկ չէին էլ դիտվում որպես դրսի, արտասահմանյան օջախներ։ Հայկական հնագույն գաղութները հեռավոր Հնդկաստանում, Մերձավոր ու Միջին Արևելքում, Եվրոպայում և այլուր, որ դարերի պատմությունն ունեին և սերնդափոխության բազմաթիվ փուլեր էին ապրել, դարձյալ սփյուռք չէին կոչվում։ Թվում է՝ հար և նման էր երևույթը, սակայն չկար սփյուռք հասկացությունը, անգամ յայն ըմբռնմամբ, որովհետև բոլորովին այլ էին տիրող մթնոլորտն ու հոգեբանությունը։ Անխապատերազմյան (առաջին աշխարհամարտից առաջ՝ Ա. Դ.) հայ սերունդները չէին իսկ անդրադարձած ցավ ու տառապանքին, որոնք կծնեին գիտակցությունն սփյուռք ըլլալուն²,—գրում է Լևոն Վարդանը։

Նախապատերազմյան շրջանի զաղթահայր չէր էլ կարող անդրադառնալ այդ տառապանքին, քանի որ տակավին անհայրենիք մեկը չէր և սեփական հոգսից ալելի ապրում էր հեռավոր հայրենիքի ցավ ու դարդով, իր գոյությունը պայմանավորում նրա՝ գոյությամբ։ Հայրենիքը ուժ էր և ոգեղեն սիրունը։ Եվ սակայն 1915-ը պիտի խաթարեր դարերով հաստատված այդ հավաքարակշռությունը։ Ավելին, ամեն ինչ պիտի շրջվեր գլխավայր։ Հայկական սփյուռքը նախապես կենտրոնացավ ու դիմագիծ առավ առավելապես երկու գաղթօջախներում՝ Ֆրանսահայ ու ամերիկահայ։ XVIII դ. սկսած՝ այս երկու երկրներում սաղմնավորված և օրավուր ավելի ու ավելի մեծ թափ առնող հայկական գաղութները պարարտ հող դարձան արմատախիլ հայության բնավորման համար։ Մտավորականությունը՝ եղբունից մազապուրծ իր մնացորդացով և Իզմիրի ջարդերից հետո (1922 թ.) Պոլիսը լքող Կեդրոնականի սանշրջանավարտներով, հիմնականում ապաստանեց Ֆրանսիայում։

Ամերիկահայ գաղութը այդ շրջանում առավել աշխատավորական, բողթույլ տրվի ասել՝ «գեղջուկ» դիմագիծ ունեւ հանձին դեռևս նախորդ դարից սկսած արևմտահայ գավառներից այստեղ հավաքվող հայկական էժան աշխատուժի։ «Ավետյաց երկիրը», սակայն, այնքան էլ շուտ չէր հայ գեղջուկի հանդեպ և հաճախ ձուլարանի թիկնոցից բացի ուրիշ ոչինչ չունեւ նրան տալու։ Եվ ծանր տուրքերը վճարելու, երկիր փող ճամփելու համար իրենց շուրհան այդ թիկնոցով փոխարինած մարդիկ հազարներով բանում էին երկաթեղենի գործարաններում՝ միակ սփոփանք ունենալով հայկական ծխապատ մի սրճարան, հայրենակցական փոքրիկ մի ընկերություն։ Այս գորշ առօրյան, հավերժական պանդխտության դատապարտված մարդկանց ճակա-

1 Լ. Վարդան, Ակնարկ Ֆրանսահայ և ամերիկահայ արձակին վրա, Բելլուք, 1969, էջ 5։

2 Նույն տեղում։

տագրերը իրենց գեղարվեստական փայլուն վավերացումը ստացան Բ. Նու-
ռիկյանի, Վ. Հալսի պատմվածքներում³:

Վիճակն առանձնապես չփոխվեց եղբունին հաջորդող տարիներին: Նման
պայմաններում տեղի մտավորականության (որ դեռևս բազմամարդ չէր և իր
կազմակերպվածությունը ու ունակություններով զիջում էր ֆրանսազայերին)
գործունեության ասպարեզը սահմանափակվում էր այդ մի քանի հայրենակ-
ցական միությունների, սակավաթիվ պարբերականների «տարածքներում»,
որոնք տպագրվող նյութն էլ ավելին չէր, քան անկումային դարաշրջանի գրակա-
նությանը բնորոշ մեղամաղձությունը: Ահա Ա. Անդրեասյանի պատկերավոր
բնութագրությունը. «Նոր կայաններուն մեջ՝ ֆիզիկական վերապրումի դժնդակ
հոգը տարիներով ճնշեց նորակազմ համայնքները, հաշմեղով արվեստի ամեն
տենչ ու թռիչք: Մշակութի ծաղկումին պայմանները քանդվել էին, և անստու-
գության, թշվառության ու վախի մթնոլորտը՝ մղձավանջի մը պես կկախվեր
հայկական սփյուռքին վրա: Գրական այդ ամայության մեջ՝ լրագիրներու
խմբագրություններ փորձեցին օվասիսներ դարձնել իրենց թերթներուն սյու-
նակները: ...նվճարածարաններու մռայլին ահաբեկ, գաղթականներու նվաս-
տացման դեմ հուսահատ ընդվզումով իրենց թաղերու գոհհային գարշանքն
հիմանք պատանի գրողներ սկսան թերթերը ողողել «բանաստեղծություննե-
րով»: Այդ պատորակներն ծագում առավ հետպատերազմյան սերունդին մշա-
կած գաղութահայ գրականությունը, որուն մեջ տարամերժորեն կ'իշխեին
աննպատակ մոլորումներ, վտիտ ապրումներու անարվեստ պոռթկումներ և
հիմանդագին ձգտումներ՝ կյանքն փախչելով սեփական «ներաշխարհին»
պարապության մեջ ամրափակվելու»⁴:

Ահալանիկ, բանաստեղծության հետ նաև բանաստեղծին տրված բնու-
թագիրը՝ ներաշխարհի սլարապություն... Ավելին հնարավոր էլ չէր ակնկա-
լել 1910—20-ականների (հատկապես ամերիկահայ) սերնդի «տղաներից»,
որովհետև, նախ, իրոք պատանի, ընդամենը գյուղական դպրոցն ավարտած
(հաճախ էլ չավարտած) սերունդ էր դա, և հետո, ավելի կարևոր մի բան.
դեռ պիտի հանդարտվեին կրքերը, պիտի մեղմանային ցավերը, որ դրսևոր-
վելու հնարավորություն ունեւոր տաղանդը՝ այլևս թոթափած ավելորդ հու-
զականությունն ու մտասնեղում դարձած մղձավանջը: 1918—20 թթ. «Փու-
նիկում» տպագրվող Համաստեղի, Հ. Գույումճյանի բանաստեղծությունները
մյուսների նման ևս աչքի չէին: Ընկնում բանաստեղծական բարձր ձիրքով, էլ
չէին խոսում այնքոր իսպառ մոռացված այնպիսի անունների մասին, ինչպիսիք
էին Անտոն Կազեյը, Լուիֆի Միհասը, Ադամ Գառնին, Արմեն Անուշը և շատ
ուրիշներ:

Բայց Ենդամենը մի քանի տարի, և պատկերն օրհանալիկորեն փոխ-
վեց: 1920-ականների վերջից արդեն թափ առավ այնպիսի մի գրականու-
թյուն (հիմնականում արձակ), որն իր ելակետային նշանակությամբ, ազգա-
փրկիչ օղակով չէր և կենսական որակներ բերեց սփյուռքահայ գրականու-
թյանը: Հարյուրամյակների բաղնիքում իրենց տաղանդով ու կոշտով վեր
բարձրացած երկու տասնյակի շատ գրողներ իրենց ուսերին առան սփյուռքա-
նայ գրականության դժվար լուծը քաշելու առաքելությունը՝ հաղթահարելով
մութացած ու հոգեկան անբնականացված արգելքներ, գրված գրողի աշխա-
տանքի, այնքան անհրաժեշտ ոգևորող լսարանից. «Ան (սփյուռքահայ գրո-
ղ—Ա. Դ.) կ'ապրի ու կ'աշխատի հայերեն, արտագրելով «ապրանք» մը՝
վերջը՝ շոր միայն հայ ընթերցողը կրնա սպառել, եթե բարեհաճի: Ուրեմն
ան կենթադրված է անողորմ սահմանափակումի մը, հոգեկանորեն ու նյութա-
պես (և ուր տապալարված է քսվելու զառիվներ, քարքարոտ արահետներ, որ-
սե կրնա ճողորմիլ միայն՝ լքելով գրականությունը, կամ հանձնվելով իր

³ Հ. Ռ. Նուրիկյան, Այգնկոթ, Ֆրեզնո, 1937, Վ. Հալսի, Հայրենի ծխան, հ. Ա, Բ, Ֆրեզնո, 1930, 1941:

⁴ Ա. Անդրեասյան, Խոհեր, հ. Ա, Բեյրութ, 1961, էջ 12:

որդեղորած երկիրի լեզվին ու մշակույթին: Հրաժարումի խայծեն կարթվեցան ոմանք...»⁵:

Այդ «ոմանք»՝ Ավետիս Տերունյան (Ջան Ռոյ Գարյուն), Մայքլ Առլեն, Սևրի Խրույա, Լ. Ջ. Սյուրմելյան, Ուիլյամ Սարոյան, Շահնուր-Արմեն Լյուբևս, Լևոն Կերտան և էլի ուրիշներ, պատկառելի հարստություն ներդրեցին համաշխարհային գրականության շտեմարանում՝ անշուշտ շանտեսելով նաև հայկական թեմատիկան ու իրենց անձով ներկայանալի վարկ ապահովելով առհասարակ հայ մարդու համար:

Բայց արմատախիլ եղած և սփյուռքում կրկին ճյուղ առ ճյուղ վերըն-
ձյուղվող հայոց ազգային ծառը, կարելի է ասել, շուր ըմպեց այլ ակունքներից և երևի չկանաչեր էլ, եթե չլինեք վերահիշյալ այն երկու տասնյակի անխոնջ ինքնազոհարեումը: Նուրիկյանը «մագիստրոս արվեստից» տիտղոսը ստիպ-
ված էր համատեղել առևտրականի գործունեության հետ, Մնձուրին (Ստամ-
բուլ)՝ դրեթե մինչև կյանքի վերջը այդպես էլ մնաց իբրև հացթուխ, քարտուղար ու հաշվապահ՝ սրա-նրա գրասենյակներում, խոտ ու ածուխ վաճառող սևա-
դործ բաւոլոր, Ա. Անդրեասյանը տարիներ շարունակ գրաշարի գոգնոց կա-
պեց: Հար և նման ճակատագրեր ունեցան մյուս բոլորը, սակայն դրանից շա-
հեց հայ գրականությունը և ընդհանրապես սփյուռքը՝ իբրև հանրություն,
շահեց հայ ժողովուրդը:

Գրական գործընթացը քննելիս շուշանյանական՝ «Արվեստի ենթահողը սրբազան դժգոհությունը չէ՝ միթե»⁶ ճշգրիտ ձևակերպումը մեծապես օգնում է վերհանել արվեստագետին հուզող այն դժգոհությունները, որոնք դարիս
երրորդ տասնամյակում արդեն ծնունդ տվին սփյուռքահայ գրականության եր-
կու հոսանքներին՝ կարոտի գրականություն և նահանջի երգ: Դժգոհության
ակունքը մեկն էր՝ որքացած հայ բեկորների գլխավերևում թևածող սուխտակ
ջարդի ուրվականը, որ տարիների հետ նյութականացավ և սկսեց ահռելի կո-
րուստներ բերել՝ մեծ աշխարհի թողտվության օրենքներով: Օտարամոլության,
ուծացման և այլասերման բրո՛ն: վտանգն էր դա, որ եկավ լրացնելու կար-
միր չարդի կիսատ թողածը, եկավ «քաղաքակրթության» իր բաժինն առնելու
արևմուտքում տարտղնված հայ խլյակներից: Բայց որքան էլ հզոր լինեք
պահանջատեր այդ արևմուտքը՝ իր «օբյեկտիվ» ինստիտուտներով, «իր ֆաբ-
րիկաների, իր շվախության վայրերի, իր գետնափոր հետնախորշերի ու
հանրատների, սովի, անթոթության ճիրաններով»⁷, այնուամենայնիվ, մտածել
էր պետք աղետը դիմագրավելու մասին, պետք էր ազգը դանդաղ մահվան
ճիրաններից դուրս բերելու ուղի որոնել:

Եվ շուշացան ծրագրերը: Ծրագրեր և ոչ ծրագիր, որովհետև անկենտրոն
ու բաժան-բաժան սփյուռքի յուրաքանչյուր հատված ինքը պիտի դժեր իր
անցնելիք ուղին: Ու թեկուզ տարբերայնորեն, մղված միմիայն կյանքի պա-
հանջներից, գրական մշակները գույգ գաղութներում կողմնորոշվեցին ճշտո-
րեն՝ դնելով իսկական ծրագրային գրականության հիմքը: Գրականություն՝
միևնույն նպատակասլաց ուղղվածությամբ, սակայն միմյանցից այնքան
տարբեր երկու բաղկացուցիչ մասերով: Լ. Վարդանը նկատում է, որ այդ եր-
կու հոսանքների տարբերությունը առավելապես սլայմանավորված էր տվա-
ներկրների՝ Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի հասարակական-քաղաքական մտքի ազդե-
ցությամբ:

Ֆրանսահայ արձակր, որ ծնունդ առավ Շ. Շահնուրի «նահանջը առանց
երգի» լեզվով (1929) և դարձավ նահանջի ահազանգ հնչեցնող գրականու-
թյուն⁸, մեծապես կրում էր ժամանակակից Եվրոպայում տիրող սյուրռեալիս-
տական ըմբռնումների կնիքը: Դա հետպատերազմյան կորուսյալ սերունդ

⁵ Նույն տեղում, էջ 11:

⁶ Գ. Սևան, Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր, Երևան, 1980, էջ 149:

⁷ Նույն տեղում, էջ 109:

⁸ Սրանով չի ժխտվում Վ. Շուշանյանի կամ Շ. Նարզունու գլուղագրության փաստը:

Ի տարբերություն նահանջի գրականության՝ կարոտի կամ հուշի գրականությունը բացառապես գեղեցիկի, վեհի, կատարյալի գրականություն էր: Այստեղ տիրապետողը վերհուշով կենդանացող երկրի վառ պատկերն էր՝ իր տաք զույներով ու սուրբ մասունքներով: Սակայն այս սուրբկտիվ զգացողությունն ուներ նաև իր օբյեկտիվ հիմքը:

Հետաքրքիր մի զուգահեռություն մամերիկահայ արձակի աստղաբույլը՝ Համաստեղ, Բ. Նուրիկյան, Վ. Հայկ ու Ա. Անդրեասյան անուններով (բացառությամբ Ա. Հայկի) սերում է պատմական Հայաստանի միևնույն անկյունից՝ Մոփաց աշխարհի Խարբերդ գավառից: Եթե այս փաղանգին ավելացնելու լինենք նաև «գտարյուն» գյուղագիր Հ. Մնձուրու և Ֆրանսահայ արձակագիրներ Հ. Զարդարյանի ու Վ. Անդրեասյանի անունները (վերջինս, ի դեպ, Ա. Անդրեասյանի հորեղբորորդին է), կարծում ենք՝ Մոփաց աշխարհի արգասավետ պտղաբերության մասին շատ բան ասված կլինի. յոթ նշանավոր դեմք՝ գրական մի սերնդում միայն: Մոփաց աշխարհը պիտի շարունակեր հարատևել հեթաթալին իրականության մեջ՝ իրենով մարմնավորելով ու սկզբնավորելով կարոտի հրաշալի գրականության թևը մեր արձակում: Թանձրացյալ զգայությունների այդ հուզառատ աշխարհում մեկը մյուսի հետևից վեր հառնեցին Մոփեի գողտրիկ ուտանները՝ Համաստեղի Փերճենչը, Նուրիկյանի Հյուսենիկը, Վ. Հայկի Խարբերդը, Հ. Մնձուրու Արմտանը, Անդրեասյանների Հագարին:

Հերոսական ջանք էր պահանջվում այս ամենի համար, Վ. Հայկի պատկերավոր բնութագրությամբ՝ հոսանքն ի վեր լողալու հանդգնություն: Բայց ժամանակի հետ և ժամանակի պահանջով պիտի տեղի տար այս գրականությանը՝ «մեկուսացումի», արտաքին աշխարհից կտրվելու, «ուրիշ երկինք և ուրիշ հողի» ունեցող մարդկանց պատմությունից փոխակերպվելով առօրյա կյանքին վերաբերող, «ամենքի պես մեկը դարձած» հայ մարդուն բացահայտող գրականության: Այս անցումը որոշ գրողների համար (Վ. Հայկ, Բ. Նուրիկյան, Հ. Ասատուրյան) եղավ բնական ու խաղաղ՝ միաժամանակ նոր ձեռքբերումներ մատնանշելով ամերիկահայ արձակում: Ոմանց համար (Ա. Հայկ, Վ. Հայկ, Համաստեղ, Մնձուրի) կա՛մ բնավ անցում չեղավ, կա՛մ էլ եղավ նվազագույն տուրքի պես մի բան՝ իբրև նյութի մշակում չհասնելով նախորդի բարձունքներին: Պատահեց նաև հակառակը, սակայն որպես «միակ շեղում» վերահիշյալ ընդհանուր «գծակարգից»: Ենթադրելով Ա. Անդրեասյանն էր՝ նրա ստեղծագործությունը ճիշտ հակառակ զգացում ունեցավ՝ կարոտ-նահանջ «կաղապար» շրջելով նահանջ-կարոտի: Եվ այս բացառության՝ սփյուռքի մեր ավագագույն գրողի՝ Անդրանիկ Անդրեասյանի գրականության փաստը հանած, պետք է ասել, որ այսօր սփյուռքահայ գրականությունը պայքարում է բացառապես նահանջի թևում, որովհետև, ավա՛ղ, մեր ավագ գրողների դեղեցիկ աստղաբույլն այլևս չկա, այլևս չկան կենդանի կարոտի տաքուկ հիշողություններ:

ТЕМА НОСТАЛЬГИИ И ОТСТУПЛЕНИЯ В ЛИТЕРАТУРЕ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ

А. Р. ДЕМИРЧЯН

Резюме

Литература армянской диаспоры зародилась и формировалась во второй четверти XX в. в основном в двух армянских колониях—во Франции и Америке. После геноцида 1915 г. для потерявших родину западных армян первоочередной должна была стать задача сохранения национального облика, что и легло в основу проблематики литературы и искусства армянской диаспоры. Развиваясь в разных странах, в полной изоляции, западноармянская литература разделилась

на две программные ветви: литература ностальгии (американская ветвь) и литература отступления (французская ветвь). Литература отступления, испытывая на себе влияние сюрреализма, изображала действительность в мрачных тонах, непосредственно указывая на опасность ассимиляции. В противовес этому литература ностальгии пыталась возродить в памяти прекрасный образ потерянной родины, воспевая прошлое в радужных красках в духе пасторальной литературы.